ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Օձուն գյուղական համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

թիվ 260-14
«01» 10 2014 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 44-ից N 47 որոշումները:

Առդիր՝ չորս թերթ:

Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիտանյան

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2014 թվականի, N 44-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՏԱՍՆԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 1-ի տասներորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0442-0085 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (6) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., հոկտեմբերի 1
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2014 թվականի, N 45-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին երրորդ եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (6) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., հոկտեմբերի 1
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2014 թվականի, N 46-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0442-0085 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 38-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի , Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 67-րդ, հոդվածի, „Իրավական ակտերի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, երկրորդ մասի չորրորդ կետի, 71-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի և երկրորդ կետի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, N 3/4 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0442-0085 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.0114 հա մակերեսով հողամասը, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների վերանորոգման արհեստանոց կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել հիսունյոթ հազար (57.000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1,000) ՀՀ դրամ: Աճուրդում հաղթող ճանաչել առավել բարձր գին առաջարկող մասնակցին:

Վերոնշյալ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի աճուրդը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 30-ի «ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0037-0031 ԵՎ 06-112-0442-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 21-Ա որոշման երկրորդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (6) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., հոկտեմբերի 1
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2014 թվականի, N 47-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի „Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին„ N 1918-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Օձուն գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-112-0037-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 0.01605 հա մակերեսով հողամասից առանձնացված 0.28 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի գործառնական նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (6)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., հոկտեմբերի 1
Գ. Օձուն